



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 296- Ա

21 հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի N 70-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.18-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի N 115-Ն հրամանը

որոշում եմ՝

1. Հաստատել.
 - 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի.
 - 2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.
 - 3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի.
 - 4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի.

- 5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մարտի 17-ի «Մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 70-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



N. Ghazaryan

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ